

նկատենք այս կրօնական կոչնոց աննմանութիւնը սովորական անկարգ խնճոյից հետ, որոց չէին կարող մասնակցիլ կանայք (աստ, 141):

Մանդակունւոյն սուր սլաքներն ունեցան իրենց բարերար ազդեցութիւնը ժամանակակիցաց վրայ: Անոցմէ շատերը տիրող սովորութեամբ կը շարունակեն մասնակից ընել նաեւ հարուստները. բայց կը զատեն զանոնք աղքատներէն, վայելչօրէն կերակրելով նախ զասոնք, որոց էր առաջին իրաւունքը, եւ յետոյ ազնուականները: Վահան Մամիկոնեան ի վաղարշապատ գալով, «նախ հոգացեալ զաղքատաց դարմանս, ապա մեծաւ ցրնծութեամբ ուրախանային եւ ինքեանք» (Փրպ. 430). նոյնպէս ըրաւ ուրիշ անգամներ ալ (նոյն, 479, 525): Յաջորդ դարերուն եւս աղքատներն եղան միշտ գլխաւոր վայելող մատաղին, ինչպէս կ'ըսէ Տարօնացին՝ թէ Հայք զայն «Աստուծոյ իբր ընծայս մատուցանեն՝ բաշխելովն աղքատաց» (Թէոփ. 282):

6. — Մեծարանք: — Կոչնոցս հոգեւորականութիւնը կը պահանջէր արդարեւ կարելոր տարբերութիւն մ'ուրիշներէ: Ս. Սահակայ կանոնները կը պատուիրեն՝ որ հասարակաց բոլոր պատարագները պաշ-